ՃՇԳՐՏՎՈՂ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿ

Ճշգրտվող հաստատուն տոկոսադրույքի հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է ստորև՝

Հաշվարկման բանաձևը՝ ՄՃ= ՄԲ+ՄՀ,
Որտեղ՝ **ՄՃ-Ճշգրտվող տոկոսադրույք, ՄԲ-Բազային տոկոսադրույք, ՄՀ-Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ:** Բաղադրիչների սահմանումները՝

- **Բազային տոկոսադրույք [հիփոթեքային վարկերի դեպքում]**
  - **Բազային տոկոսադրույքի հիմնական տոկոսադրույք՝** ՀՀ բանկային համակարգի կողմից ՀՀ դրամով ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներից 1 տարուց մինչ 5 տարի ժամկետայնությամբ ներգրված ավանդների միջին կշռված տոկոսադրույքի միջին ցուցանիշը՝ հաշվարկված որպես վերանայման օրվա դրությամբ հասանելի նախորդ ամսվա դիտարկման՝ կլորացված (մաթեմատիկական) ստորակետից հետո 1 տասնորդական նիշի ճշտությամբ:
  - **Բազային տոկոսադրույքի երկրորդային տոկոսադրույք՝** ՀՀ Բանկային համակարգի կողմից 1 տարուց ավել ժամկետայնությամբ ՀՀ դրամով ներգրված ժամկետային ավանդների տոկոսադրույքը՝ հաշվարկված, որպես վերանայման օրվա դրությամբ հասանելի նախորդ ամսվա դիտարկման՝ կլորացված (մաթեմատիկական) ստորակետից հետո 1 տասնորդական նիշի ճշտությամբ:
    Բանկային համակարգի կողմից ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներից ներգրավված ավանդների տոկոսադրույքներին կարող եք ծանոթանալ հետևյալ կայքի՝ https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx «Ֆինանսական շուկայի տոկոսադրույքներ» բաժնի «Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները» հրապարակման մեջ:
- **Բազային տոկոսադրույք [Գրավով ապահովված այլ վարկերի դեպքում]**
  - **Բազային տոկոսադրույքի հիմնական ցուցանիշ՝** ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույք (https://www.cba.am/am)

    - **Բազային տոկոսադրույքի երկրորդային ցուցանիշ՝** ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի 6 ամիս ժամկետայնության եկամտաբերություն (https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx)
- **Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ՝** Վարկի տրամադրման անվանական տոկոսադրույքից նվազեցված վարկի տրամադրման պահին առկա բազային տոկոսադրույք:
- **Առաջին վերանայում/սահմանում՝** Պայմանագրի կնքումից 3 (երեք) տարի հետո:
- Պարբերական վերանայումներ՝ Յուրաքանչյուր 6 (վեց) ամիսը մեկ (փետրվար և օգոստոս ամիսների առաջին օրը):
- **Կիրառման ամսաթիվ՝** Փետրվար և օգոստոս ամիսների առաջին օրվան հաջորդող մոտակա մարման ամսաթիվը: Տարեկան երկու անգամ:
- **Կլորացում՝** Մաթեմատիկական կլորացման կանոններով՝ տասնորդական տոկոսի ճշգրտությամբ:

Ճշգրտվող տոկոսադրույքը ենթակա է վերանայման այն դեպքում, երբ ճշգրտված տոկոսադրույքի և գործող տոկոսադրույքի տարբերությունը կազմում է 0.5 տոկոսային կետից ավելի:
Տոկոսադրույքի բարձրացման և իջեցման առավելագույն շեմը սահմանվում է 3.5 տոկոսային կետ, որը հաշվարկվում է տրամադրված վարկի սկզբնական տոկոսադրույքի նկատմամբ:

ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում՝

- Բազային տոկոսադրույքի հիմնական տոկոսադրույք՝ 6 ամիս ժամկետայնությամբ ժամկետային ապահովված օվերնայթ ֆոնդային տոկոսադրույքը (CME Term SOFR USD 6 Month) (https://www.newyorkfed.org/markets/reference-rates/sofr):
- Բազային տոկոսադրույքի երկրորդային տոկոսադրույք՝ 6 ամիս ժամկետայնությամբ ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի եկամտաբերություն (https://www.federalreserve.gov/releases/h15/):